

Թերզեան եպիսկոպոսն ու վասիկան

«Bakı» (№ 193) լրագիրը, «La Presse associée» — Ի հեռագրերից առնելով գրում է:

Վատիկանում շատ պախարակում են հայ կաթողիկոսների պատրիարք Թերզեանին այն պատճառով, որ նա փոխանակ Կ. Պոլիս գնալու և աշխատելու համաձայնութեան գալ հայ ազգային ժողովի հետ, հրաժարական է տուել Պապը հրաւիրել է նրան Հռոմ պատուէրներ տալու և իւր տեղը ուղարկելու, բայց Թերզեան եպիսկոպոսը առանց Վատիկանի գիտութեան տուել է իւր հրաժարականը Կ. Պոլսում: Թերզեանի հրաժարականը ծանրացնում է ստեղծուած դրութիւնը և նրանով, որ այժմ կան արդէն երկու հրաժարուած պատրիարքներ, և երկիւղ կայ թէ ազգային ժողովը օգտուելով իւր արտօնութիւնից, չի ձեռնարկի երրորդ պատրիարքի ընտրութեան, և գրանով նոր բարդութիւնների առիթ կը տայ:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նոր համայնք:

Ներքին գործոց նախարարութիւնը, ասում է «Bakı» (№192), թոյլ է տուել Բաքում ապրող հայ բողոքականների առանձին լուտերական — բողոքական համայնք կազմելու:

ՕՏԱՐ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ՌՌՌՍ ՊՐԱՒՈՍՂԱԻ ԵԿԵՂԵՑԻ

Համառուսական եկեղեցական ժողովի մասին.

Սրբ. Սինոդում, գրում է «Церк. Вѣст.» (№ 34), տիրում է այն համոզումը, թէ մօտիկ ժամանակում համառուսական ժողով գումարելու ոչ մի հիմք չկայ: Ա.ա.Վին,

շատերը կարծում են, որ ժողովը կարող էր բարերար արդիւնք ունենալ միայն այն դէպքում, եթէ ազդեցիկ և հեղինակաւոր մի բարձրաստիճան հոգեւոր պաշտօնեայ լինէր պատրաստի, որը կարողանար ղեկավարել ժողովը. այդպիսի անձն չկայ: Երկրորդ կանոնական կարող է լինել միայն պատրիարքի հրաւիրած ժողովը, բայց այժմ պատրիարք նշանակել ցանկալի չէ. այս կարծիքին քչերն են: Յամենայն դէպս, փաստն այն է, որ ժողովի մասին ոչ միայն պաշտօնապէս խնդիր չի յարուցւում Սինոդի նիստերին, բայց և Սինոդի անդամների մէջ մասնաւոր կարծիքների փոխանակումն էլ չի եղել այս մասին:

### Եկեղեցական ծխի բարենորոգութիւն.

«КАВКАЗЪ» — (օգոստ. 19) առնելով «Р. В.» լրագրից՝ հարգում է, որ սուս. սրբ. Սինոդը աւարտել է նախկին օրեր—պրօկուրօր Լուկիանովի կազմած եկեղեցական ծխի բարենորոգութեան ծրագրի քննութիւնը: Այդ ծրագիրը այժմ մի քանի փոփոխութիւնների է ենթարկւում: Փոփոխուած ծրագրի համեմատ ծխական են ճանաչւում ծխի շրջանում ապրող բոլոր պրաւօսլաւ անձինքը, որոնք եկեղեցուց մերժուած չեն: Ծխական գործերի կառավարութեան մէջ մասնակցութիւնը կատարւում է ծխական խորհրդի միջոցով: Ծխական ժողովը կառավարում է միայն ծխական գոյքը չմիջամտելով եկեղեցական գոյքերին, որի կառավարութիւնը պատկանում է, ինչպէս և ցայժմ, թեմական իշխանութեանը: Ծխական ժողովից ընտրւում է խորհուրդ, որ կազմուած է լինելու 12 հոգուց, որ եկեղեցու պաշտօնեաների հետ ի նկատի են առնում ծխական ժողովի որոշումները, և վարում են եկեղեցու գործերը: Եկեղեցու պաշտօնեաներին ընտրում և կարգում է թեմական առաջնորդը, իւր արամագրութեան տակ եղած թեկնածուներից, ի նկատի ունենալով ծխականների միջնորդութիւնները, եթէ ներկայացուած կան, և վերաբերում են բաց պաշտօնի համար իրաւունք ունեցող անձին:

Ծխական իրաւունքների ընդարձակումն

«Россія» լրագրում (օգոստ. 12) Ռուս. Սրբ. Սինոդի գիւանատունը յայտնելով, որ «НОВ. ВР.»-ի յօդուես կարծիքը չի համապատասխանում իրողութեանը, գրում է. ծխական կանոնագրութեան նոր քննուած ծրագրերով ծխականը ոչ միայն չէ զրկում առաջին ծրագրում նախանշանակած «իրաւունքներից» այլ ընհակառակն, ծխի գործունէութեան շրջանակը, ի դէմս ծխական ժողովի և ծխական խորհրդի, մտագրութիւն կայ ընդարձակել:

Նոր աւանդատուն եւ մասեմադարան

«НОВ. ВР.» (11 օգոստ.) հաղորդում է. Մոսկւայի պատրիարքական աւանդատունն (եկեղեցական զգեստների, սպասների և անօթների պահեստ) ու մատենագարանը վաղուց անտի լաւ բնակարանում զետեղելու կարիք կար: Սրբ. Սինոդը հաստատել է մի ծրագիր, որով Մոսկւայի Սինոդական Բաժանմունքի երկարութեան կից մի շէնք պէտք է կառուցուի, ճակատը դէպի Կրեմլի հրապարակը: Այս շինութեան նախահաշիւը մինչև 120,000 ռ. է հասնում. Այդ գումարի համար առաջարկ կը լինի Պետական Գումայի սկզբնական նիստերից մէկում: Մինչև այդ հարցի լուծումն, պատրիարքական աւանդատան իրերի մանրամասն ցուցակ պէտք է կազմուի:

ՌՌԻՍ ՀԵՐՉՈՒԱԾՆԵՐ.

Կրօնափոխութեան առիթով նախաւարական բացասութիւն.

«Россія» (31 օգոստ.) հաղորդում է որ Ներքին գործերի նախարարութիւնը բացազրել է թէ աղանդաւորութեան անցնելու գէպքում, երբ տեղումը նոյն աղանդի հոգևորական անձը չլինի, նոյնպէս և եթէ աղանդը ամենևին հոգևորական անձն չի ընդունում, ցանկացողը իւր յայտարարութիւնը պէտք է ուղղի այն անձին, որը խընդ-

րատուի ցուցման համեմատ կատարելու է խնդրատուի ընտրած աղանդին մէջ ընդունելու գործողութիւնը: Եթէ խնդրատուն այդպիսի անձն ցոյց չտայ, քաղաքական իշխանութիւնը կարող է հաւատք փոխողին միայն պաշտօնական հաստատագիր տալ, թէ արգելք չկայ յիշուած անձին միանալու իւր ընտրած դաւանութեանը:

### Հնամէսների համաժողով

Այսօր, ասու՛մ է «НОВ. ВРЕМ.» (օգոստ. 26), Րօզօժեան գերեզմանատանը բացուել է ուսւ հնամէսների ժողովը: Ժողովի բացումից առաջ տեղի է ունեցել մաղթանք, որից յետոյ զանգահարութեամբ բոլորը գնացել են Քրիստոսի ծննդեան տաճարը, ուր տեղի պէտք է ունենան ժողովի նիստերը: Ժողովին ներկայ էին 13 եպիսկոպոս և 76 քահանաներ ու աշխարհականներ: Ներքին գործերի նախարարութեան կողմից ժողովին պաշտօնապէս ներկայ է առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Ա. Ա. Կօլօքրիվով:

Ժողովի զբաղմունքները սկսուել են ընտրելով մի յանձնաժողով, որը զբաղուած է ուղարկուած զեկուցումները խմբագրելով: Յանձնաժողով ընտրելուց յետոյ ժողովը զբաղուեց եպիսկոպոսական թափուր աթոռների համար թեկնածուների ընտրութեամբ: Այնուհետև ժողովը լսեց Ամուրի եօթ գիւղերի հնամէսների խնդիրը: այդ գիւղացիները գաղթել են այնտեղ մօտիկ ժամանակներու մտումինիայից, և խնդրում են առանձին եպիսկոպոսական աթոռ հաստատել այնտեղ, որի մասին միջնորդել էր Տոմսկի Թեմական ժողովն էլ: Ժողովը որոշեց այդտեղ եպիսկոպոսական առանձին աթոռ հաստատել և եպիսկոպոս ընտրելով Յովսափին, կոչեց նրան Իրկուտսկի և Ամուրի եպիսկոպոս: Ժողովը մօտ եօթն օր կը տևի: Ժողովը բաղմաթիւ շնորհաւորական հեռագրեր է ստացել:

«НОВ. Вр.» հաղորդում է նաև, որ հնամէսների ժողովի օգոստոսի 27-ի նիստում որոշուել է կազմել Մոսկվայի ար-

քեպիսկոպոսի մօտ հօգևոր խորհուրդ և ընդունել է հետեւեալ բանաձևը. «կազմուում է արքեպիսկոպոսական խորհուրդ 12 անդամներից և արքեպիսկոպոսից, կազմի մէջ են լինելու 2 եպիսկոպոս, երեք քահանայ, մի սարկաւազ և վեց աշխարհական: Խորհուրդը մասնակցում է համայն Ռուսաստանի հնածէսների կառավարութեանը, ունենալով մշտական ժողովների խորհրդի իրաւունք:»

Բապտիզմը Սիրիի ռուսների մէջ.

«Кавказъ»-ը (№ 174.) առնելով «Мессіон. Обозр.» լրագրից հաղորդում է, որ խղճի աղատութեան հրատարակուելուց յետոյ Սիրիում գարմանալի արագութեամբ տարածում է բապտիզմը, որ իւր գործունէութիւնը գաղտուկ ճանապարհով ուղղել է նսեմացնելու եկեղեցու և պետական իշխանութեան հեղինակութիւնը: Բապտիստութեան գլխաւոր կէտերը ընկած են Սիրիական մեծ ճանապարհի ուղղութեամբ: Երկաթուղային հաղարաւոր ծառայողներն ու մշակները՝ գործադուլների, պարապորդութեան և սովի օրերից յետոյ, «իսկական ճշմարտութիւնը» որոնելով, քաղաքական դրօշակը փոխարինել են կրօնական աղատութեան դրօշակի, որի տակ քարոզիչները խոստանում են իրանց հետևողներին անկատելի և առանց ռիսկի հասցնել քաղաքական դանազան տեսակի աղատութեան: Սիրիում սակաւ կայարան կրգտնես, ուր չլինեն բապտիստութեան յարածներ և կատաղի քարոզիչներ:»

Մեկուսացած գիւղերում բապտիստութեան հաւատարիմ դաշնակիցներն են ոչ միայն նախարարական դպրոցների այլ և եկեղ. ծխական դպրոցների ուսուցիչները, որոնք դրազուած են տարածելով այդ վարդապետութիւնը որի մէջ սերտ հիւսուած են կրօնական նպատակները քաղաքական յեղափոխական մտքերի հետ:»

Գլխաւոր դերը բապտիստութեան տարածման մէջ խաղում են այս ազանդի դրամական ահագին միջոցները: Ռուս բապտիստների միջոցները 11 միլիոն են հաշուում: Բացի սրանից արտասահմանից ամեն տարի ուղարկւում

են մեծ նպաստներ: Ի դուր չէ, որ մտրոկանները բապտիզմը «ոսկէ աղանդ» են կոչում:

### ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Վասիկանի գործեր. «Россия» (17 օգոստ.) լրագիրը գրում է. Վերջին ժամանակներում գերմանական լրագրներում, Հռովմայ քահանայապետի հիւանդութեան վրդովեցուցիչ լուրերի առիթով շատ գրուեց Վասիկանի գործերի մասին:

Մի քանի տարի է, ինչ արևմտեան եկեղեցին ներքին և արտաքին ճգնաժամի մէջ է, որ սկսել է դեռ ներկայ պապի նախորդի օրով, բայց աւելի սուր կերպարանք է ստացել ներկայ Պիոս Ժ. պապի իշխանութեան վերջին տարիներում, Պիոս Ժ.-ի, որ մինչև իւր ընտրութիւնը Վենետիկի պատրիարք էր:

Այդ պապը իւր քահանայապետութեան առաջին օրերում հաստատուն ցանկութիւն յայտնեց լինել Սուրբ Գահի վերայ ոչ այնքան «քաղաքագէտ դիպլոմատ» օրքան «աստուածաբան», որի հետևանք նրա ձեռք առած քաղաքական իշխանութեան վերաբերմամբ անհաշտ գործելակերպը առաջ բերեց մի կարգ ընդհարումներ եկեղեցու և իտալական պետութեան, նոյնպէս և Հռովմի կուրիայի ու օտար պետութիւնների միջև: Եթէ Պիոս Ժ. պապը իւր ժամանակակիցների առաջ հանդիսանում է աւելի աստուածաբան քան դիպլոմատ քաղաքագէտ, այդ դեռ չի ապացուցանում թէ նա անտարբեր պէտք է լինէր կեանքի խնդիրների վերաբերութեամբ: Պիոս Ժ. հետաքրքրում է մարդկային յարաբերութեան այդ երևոյթներով թերևս իւր նախորդից ոչ պակաս, այն տարբերութեամբ միայն, որ սա ամեն դէպքում հանդէս է դալիս որպէս համոզուած կողմնակից կրօնական շահերը քաղաքական շահերից գերադասելուն. Ի հարկ է, այն դէպքերում, երբ նրանց մէջ նկատում է օր և է հակակշիռ:

Այդպիսի անողորմ վարմունքը, որ հանդիսանում է

որպէս յայտնի ապացոյց այն բարձր կրօնական տրամագրութեան, որով համակուած է Պիոս Ժ.ը պատճառ եղաւ այն բազմաթիւ դիպլոմատիքական և կրօնական պարտութիւններին, որոնք վիճակուել են Հռովմի Կուրիային նրա քահանայապետութեան միջոցին: Վատիկանի բանտարկեալը իւրաքանչիւր տարի մի քանի անգամ յայտնում է իւր տհաճութիւնը ժամանակակից կեանքի պահանջների առիթով, միևնոյն է, վերաբերում լինէին դրանք պապի աշխարհային իշխանութեան, թէ դիտական-կրօնական շրջանին: Այդ բանին որպէս պատասխան ամեն կողմից շուտ էին ձայներ, որոնք կաթողիկոսներին հրաւիրում էին յայտնապէս անջանուել Հռովմից, կամ, լաւագոյն հանգամանքում, բարւոքել եկեղեցական կեանքը առաջադիմական ոգով: Արեւմտեան Եւրոպայում արդէն ծագել է և կազմակերպւում է ուժեղ կրօնական—սօցիալական կուսակցութիւն, որ կոչւում է մօդերնիստական, որի վարդապետութիւնը տրագութեամբ տարածւում է Իտալիայում, Ֆրանսիայում ու Գերմանիայում, և Հռովմէական կաթողիկ եկեղեցու հետ յայտնի հակաճառութեան մէջ է: Կարելի է վստահօրէն ասել, որ ոչ միայն Պիոս Ժ.ը, այլև նրա ապագայ յաջորդը, մի և նոյն է թէ ինչ ազգի կամ կուսակցութեան կը պատկանի նա, երբէք չի համաձայնի ենթարկել Հռովմէական եկեղեցին այն փոփոխութիւններին, որոնց իրադարձմանը հետապնդում են մօդերնիստների ղեկավարներն ու ամենատեսակ ազատամլտ քրիստոնէական հայեացքների ներկայացուցիչները:

Այնու ամենայնիւ, հնարաւորութիւնը, թէ հեռու կամ մօտիկ ապագայում նոր անձն կը բազմի ս. դահի վերայ, արդէն հարկադրում է Վատիկանի բազմաթիւ կամեակիցներին ու հակառակօրդներին իրար անցներ, որովհետև մինչև անգամ Հռովմէական եկեղեցու հին կարգերին հաւատարիմ մնալով հանդերձ նոր քահանայապետը չի կարող աչքի ընկնող փոփոխութիւններ ներմուծել արդի պապի կրօնական — քաղաքական ծրագրի բազմաթիւ մասերի մէջ: Պէտք է նոյնպէս ուշ դարձնել նաև այն բնորոշ հանգամանքի

վերայ, որ գերմանական մամուլի մի քանի օրգաններ, առանք Գերմանիայում կաթողիկե եկեղեցու շահի ներկայացուցիչներն են հանդիսանում, հնարաւոր են համարում գերմանացի արդի վեց կարգինալներից մէկին պապ ընտրել:

Սակայն «համագերմանական այս հրապարակախօսների» փառասիրական ձգտումը հազիւ թէ իրագործուի, որովհետեւ, ոչ-իտալացու ընտրութիւնը կը գառնար արդէն արևմտեան եկեղեցու եկեղեցական և քաղաքական կարգերի չափազանց յանդուգն խանդարումն:

Յամենայն դէպս, պէտք է խոստովանել, որ Պիոս Ժ-ի յաջորդին ծանր ժառանգութիւն կը մնայ, որը կառավարելը նիւթական և քարոյական մեծ ուժերի լարումն կը պահանջի Ս. Պետրոսի տեղակալից, որը հարկադրուած պէտք է լինի Եւրոպայում և նրա սահմաններից դուրս, պաշտպանել կաթողիկոսութեան շահերը «գեւտակրատական հիւանդութեան» սպառնացող հոսանքից:

#### Գերմ. կաթողիկների ներքին վէճերը. (Церк. Вѣст.)

Գերմանիայում կաթողիկները յուզուած են, և այն էլ քաղաքական ու սոցեալական խնդիրների պատճառով: Քեօլնեան կուսակցութիւնը ձգտում է քաղաքական խնդիրներում լայն աշխարհայեցութեամբ միւս քրիստոնէական յարանունութիւնների հետ համակամութեամբ ընթանալ, և այս տեսակ գործելակերպի մէջ է տեսնում եկեղեցու շահը, Բերլինեան կուսակցութիւնը, ընդակառակն, ձգտում է բոլորովին առանձնանալ և հաղորդակցութիւն չպահել միւս քրիստոնեայ եկեղեցիների հետ, որպէս զի կաթողիկոսութեան ոյժը չըլատուի և չթուլանայ: Առաջին կուսակցութիւնը, որին հավանաւորում է Քեօլնի կարգինալ արքեպիսկոպոս Ֆիշերը, առ այժմ գերակշռում է: Հակառակ կուսակցութեան պարագլուխն է Բերլինի եպիսկոպոս կարգինալ Կրոպպը, որ յամառ փորձերից յետոյ այժմ տեղի է տուել գործնականապէս մաքառելուց: Այժմ վէճն անցել է գրաւորին, բերլինեան կուսակցութիւնը լրագրներով և տետրակներով քեօլնականներին ամբաստանում է որպէս

մողեռնիստներս Բեռլինականները վերաւորուած համարե-  
լով իրանց այսպիսի անարդար ամբաստանութիւնից՝ ահա-  
գին աղմուկ են բարձրացրել իրանց լրագրներում և շրջա-  
բերական հրատարակել բերլինականների դէմ, վէճը աւելի  
ևս սուր կերպարանք է ստացել այն օրից, երբ Վատիկանի  
պաշտօնական «Correspondance de Rome» հրատարակեց յի-  
շեալ շրջաբերականը քաջալերելով բերլինականներին և,  
երբ Միլանի ու Փարիզի լրագրներն էլ նոյն միտքը յայտնե-  
ցին: Գերմանացիները ցաւելով յայտնում են, որ նրանց  
դարան են գործում արտասահմանում Վատիկանի քաջալե-  
րութեամբ, և իրանց բողոքն են յայտնում Հռովմի վայնա-  
սունի դէմ: Տպաւորութիւնը մեղմացնելու համար Պապի  
նուիրակը Միւնխենում յայտնել է, որ Correspondance de  
Rome Հռովմի Կուրայի ոչ պաշտօնական և ոչ կիսապաշտօնա-  
կան լրագիրն է և ինքն նուիրակը չի քաջալերում յիշեալ  
լրագրի յօդուածը, ինքն կարգինալ Մերրի-դել-վալն էլ հաս-  
տատել է, որ լրագիրը մասնաւոր է, և յայտնել է, որ Վա-  
տիկանը իւր գործերը չի վարում լրագրների ցուցմունք-  
ներով ու եպիսկոպոսների տուած տեղեկութիւններով:  
Սակայն Պապի ստատոս — սեկրետարը իւր կողմից չի էլ պա-  
խարակում լրագրին:

Հոգեւ. Սեմինարիսների ժողովը Ֆրանսիայում.

Այս տարի յուլիսի մէջ գումարուել է հոգևոր սեմի-  
նարիստների 6-րդ ժողովը, որին մասնակցել են 120 մարդ:  
Կազմուած է եղել շորս յանձնաժողով, ժողովը քննել է  
յանձնաժողովների ղեկուցումները, որոնք վերաբերում  
էին փիլիսոփայական, բարոյական, սօցիալական և կրօնա-  
ւորական խնդիրներին: Ժողովը համակերպելով Լևոն Ժ.Գ.  
և Պիոս Ժ. պապերի ցանկութիւններին՝ հարկաւոր համա-  
րեց սեմինարիաներում կրթութիւնը յարմարեցնել բարո-  
յական աստուածաբանութեանը: Ժողովը որոշել է առան-  
ձին խորհուրդ կազմել սօցիոլոգիայի համար այն պայմա-  
նով միայն, որ այն գտնուի աստուածաբանութեան դոկտոր-  
ների ղեկավարութեան տակ և աւանդուի բարձր դասարան-

ներում. Ժողովը սահմանել է, որ սեմինարիաներում աւանդուի եկեղեցական փիլիսոփայութիւն, և այն էլ Թովմա Ագուինացունը որ կաթողիկ դպրոցներում սովորաբար դասաւանդւում է, ոչ միայն այն պատճառով, որ այն քաջալերուած է պապերից, այլ և այն պատճառով, որ այն աւելի յաջող է լուծում փիլիսոփայական խնդիրները: Փիլիսոփայութեան համար բացի լատիներէն ձեռնարկներից, պէտք է տալ աշակերտների ձեռքը նայն ինքն Թովմա Ագուինացու և այլ մեծ սխալաստիքների բնագիրները, թէ ընդհանուր և թէ դպրոցների համար եղած հրատարակութիւններով:

Անիոնիսների Գ. ժողովը Վելեգրադում. (Церк. Вѣст. № 35)

Յուլիսի 27-30 ն. ա. Վելեգրադում տեղի ունեցաւ գլխաւորապէս սլաւոն կաթողիկ աստուածաբանների Գ. ժողովը, պրաւորաւ եկեղեցին հռովմէական-կաթողիկական եկեղեցու հետ միացնելու համար: Ժողովին մասնակցում էին 140 հոգի, թող բազմաթիւ ուկրաինները: Այս անգամ Վելեգրադի ժողովին շեն մասնակցել պրաւորաւ աստուածաբանները, բացի Ռերլինի առսական գեապանատան քահանայից, որ մի զեկուցումն էր ուղարկել որի վերնագիրն էր. «Հնարաւոր է արգեօք հռովմէական-կաթողիկ եկեղեցին միացնել արևելեան պրաւորաւ եկեղեցուն»:

— Քանի որ միութեան խնդիրը կաթողիկները դնում են պրաւորաւ եկեղեցին միացնել հռովմէականի հետ, իսկ պրաւորաւները՝ հռովմէական եկեղեցին միացնել պրաւորաւ եկեղեցու հետ— ոչ մի միութիւն չի կարող լինել: Չոկ բան է բոլոր եկեղեցական յարանուսութիւնների միութիւնն ի Քրիստոս սիրով և խաղաղութեամբ, յարգելով իւրաքանչիւր եկեղեցու ծիսական և վարչական առանձնայատկութիւնները որպէս ազգային և ժողովրդական հոգու արտայայտութիւն:

**ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

Պրուսիայի «Աւետարանական միութեան» առաջին ընդհանուր ժողովը:

Այս տարի յունիսի 13 — 14 (ն. տ.) տեղի է ունեցել Հալլէում Սւետարանական միութեան «ժողովը, որ սկըզբնաւորուած է 1873 թուին: Երբեմն այդ ժողովը վճռական նշանակութիւն ունէր եկեղեցական օրէնսդրական ժողովներում, բայց յետոյ յետ մղուեց աջակողմեան երկու խմբերից, թէ և այժմ էլ նա բաւական նշանակութիւն ունի սինօզներում: Աւետարանական միութեան» նպատակն է միացնել և հաշտեցնել եկեղեցական կեանքում հեղինակաւորութեան և ազատութեան սկզբունքները, այն է, հաւատարիմ մնալ անցեալի ժառանգութեան, և յարմարուել ներկայի պահանջներին, պահպանել առանձին համայնքների անկախութիւնը և հպատակութիւնը եկեղեցական ընդհանուր կազմին: Սւետարանական միութիւնը ընդունեց հետեւեալ եղբակացութիւնը, քաջալերելով մօտիկ ժամանակներումս բարձրագոյն խորհրդի բացատրութիւնը թէ առաքելական հանգանակը պարտաւորական է ոչ թէ տառերի այլ մտքի առմամբ, այդ միտքը պաստօրները պարտաւոր են բացատրել պատշաճեցնելով տիրող կրօնին, ընդունելով առաքելական հանգանակին համապատասխան նոր հաւատապատում:

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

Համաեխարհային ժողով հաւատոյ եւ եկեղեցու բարեկարգութեան համար. (Церк. Вѣст. № 35).

Ամերիկայի եպիսկոպոսական վերջին գլխաւոր ժողովը որոշել է համաշխարհային մի ժողով հրաւիրել հաւատի և եկեղեցու բարեկարգութեան համար, կազմուած է մասնաժողով, որը իւր գործունէութեան հաշիւը ներ-

կայացրել է: Յանձնաժողովն ասում է, որ համաշխարհային ժողովի նպատակը պէտք է լինի քննել այն կէտերը, որոնցով միմեանցից բաժանուժ են քրիստոնէական դաւանութիւնները: Համաժողովը պէտք է իրաւունք չունենայ հարկադրելու ժողովին մասնակցողին ընդունել այս կամ այն կէտը: Յանձնաժողովի շանքն է բոլոր նրանց, որոնք դաւանում են Տէր Յիսուս Քրիստոսին Աստուած և Փրկիչ, համաշխարհային ժողովին գործակցելու հրաւիրել պաշտօնական և ոչ պաշտօնական հրատարակութիւններով:

Արդէն բաւական անձինք զանազան դաւանութիւններից ցանկութիւն են յայտնել համաշխարհային ժողովին մասնակցելու: Կաթոլիկ եկեղեցուց կարդինալ Գիբբօնօը պրաւասլաւ եկեղեցուց Պլատոն արքեպիսկոպոսը մեծ հետաքրքրութիւն են ցոյց տալիս: Հետաքրքրութիւն են ցոյց տալիս և միւս քրիստոնէական յարանուճութիւնները, որոնք մասնաժողովներ են կազմել համաշխարհային ժողովի մասին խնդիրները քննելու համար:

Յօւսիկ Արեւսպօ.

